ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԴՐԱՄԱՆԵՐ


2015

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ



ՀՈՒՇԱՊՐԱՄՆԵՐ



2015



ԵՐԵՎԱՆ 2016

ԱՐԹՈՒՐ ՋԱՎԱԴՅԱՆ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ



Հարգելի ընթերցող

«Հայաստանի Հանրապետության հուշադրամներ» ամենամյա հանդեսը շարունակում է ներկայացնել ՀՀ կենտրոնական բանկի կողմից թողարկված հուշադրամները, որոնք արտացոլում են տարվա ընթացքում նշանավորված հոբելյաններն ու իրադարձությունները:

2015 թ. թողարկվեցին հուշադրամներ՝ նվիրված հայ ազգային-ազատագրական պայքարի նշանավոր գործիչ, զորավար Անդրանիկ Օզանյանի և նկարիչ Փանոս Թերլեմեզյանի ծննդյան 150-ամյակին: Այս հոբելյանական թողարկումներով ներկայացվեց հայ ազգի նվիրյալների ներդրումը հայ ազգային-ազատագրական շարժման, ինչպես նաև ազգային արվեստի զարգացման գործում:

2015 թ. սկզբին Հայաստանի Հանրապետությունն անդամակցեց Եվրասիական տնտեսական միությանը: Աղահովելով անդամ-պետությունների միջև ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի ազատ տեղաշարժը՝ ԵԱՏՄ-ն հնարավորություն ընդձեռնեց տարածաշրջանում վարելու միասնական տնտեսական քաղաքականություն՝ բնակչության կենսամակարդակի բարելավման կայուն պայմաններ ստեղծելու նպատակով: ՀՀ կենտրոնական բանկը ևս անմասն չմնաց այս գործընթացից և, ի նշանավորումն Հայաստանի ԵԱՏՄ-ին անդամակցության մեկամյա տարեդարձի, 2015 թ. թողարկեց «Եվրասիական տնտեսական միություն» հուշադրամը:

2015 թվականն արժևորվեց նաև ՀՀ սահմանադրական դատարանի հիմնադրման 20-ամյա հոբելյանով: ՀՀ սահմանադրական դատարանը ոչ միայն Սահմանադրության գերակայության և օրինապահության խոհիդանիշն է, այլև Հայաստանի անկախ պետականության ձեռքբերման ու պահպանման հզոր երաշխիք: Այս հոբելյանին է նվիրված ՀՀ կենտրոնական բանկի կողմից թողարկված «ՀՀ սահմանադրական դատարանի 20-ամյակ» հուշադրամը:

2015 թ. լրացավ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը: Եղեռնական այս իրադարձությունը ՀՀ կենտրոնական բանկը հավերժացրեց «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելից» արծաթե հուշադրամի թողարկմամբ: Հուշադրամը տպավորիչ է իր ձևավորմամբ՝ արտահայտելով ոչ միայն անսահման վիշտ ու տառապանք, այլև՝ մախառնումի ու վերածննդի վեհ գաղափարներ: Ի թիվս այլ պետական միջոցառումների՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին, ՀՀ կենտրոնական բանկը ձեռնամուխ եղավ «Անմոռուկ» հուշամեդալի, ինչպես նաև «Նահատակված հայ մտավորականներ» և «Կորսի ու պայքարի կոթողներ» հուշամեդալների շարքերի թողարկմանը:

Ցանկանում եմ փաստել այն ուրախալի իրադարձությունը, որ 2015 թ. Մոսկվայում կայացած «Դրամների համաստեղություն-2015» իններորդ միջազգային մրցույթին «Աշխարհի ամենահին ծառերը» արծաթե հուշադրամների հավաքածուն արժանացել է պատվավոր երրորդ մրցանակի՝ «Տարվա հավաքածու» անվանակարգում: Այս ձեռքբերումը լավագույնս արտացոլում է ՀՀ կենտրոնական բանկի թողարկումների բարձր հեղինակությունը նաև միջազգային ասպարեզում:



ՍՈՒՐԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ՀՀ կենտրոնական բանկի
Դրամաշրջանառության վարչության պետ

ՀՈՒՇԱԴՐԱՄՆԵՐ 2015

2015 թ. ՀՀ կենտրոնական բանկը համագործակցել է Լեհաստանի և Լիտվայի դրամահատարանների հետ և թողարկել մի շարք հուշադրամներ:

ՀՀ կենտրոնական բանկը Լեհաստանի դրամահատարանի հետ համագործակցության արդյունքում 2015 թ. թողարկել է «Եվրասիական տնտեսական միություն» և «Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 20-ամյակ» արծաթե հուշադրամները: Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի անդամակցության մեկամյա տարեդարձին նվիրված հուշադրամի հատումն իրականացվել է ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ: Դարձերեսին պատկերված ԵԱՏՄ-ի պատկերանիշը ներկայացված է լուսանկարային տեխնոլոգիայի (Minted Photo Image) կիրառմամբ, իսկ ԵԱՏՄ երկրների դրոշների գունային գամման՝ ուլտրամանուշակագույն տպագրության (UV Printing) եղանակով:

«ՀՀ սահմանադրական դատարանի 20-ամյակ» հուշադրամը համայրել է «Հայաստանի պատմություն» թեմատիկ շարքը: Հուշադրամն առանձնանում է ոսկեզօծման տեխնոլոգիայի եղանակով՝ ուռուցիկ զարդանախշերի ներկուռ կատարմամբ:

Կերդարվեստի ոլորտում «Անվանի անհատներ» թեմատիկ շարքը 2015 թ. լրացվել է «Փանոս Թերլեմեզյան-150» արծաթե հուշադրամով, որը ներկայացված է պատկերազարդ տեղեկատվական գրքույկով: Պատրաստման որակը լավացված է, իսկ դիմերեսին ու դարձերեսին տամպոտպագրության եղանակով պատկերված են դրվագներ Փանոս Թերլեմեզյանի կյանքից:

«Հայոց պեսականություն» թեմատիկ շարքի «Հայ զորավարներ» ենթաթեման 2015 թ. համալրվել է «Անդրանիկ Օզանյան-150» արծաթե հուշադրամով: Հուշադրամի էսքիզները ներկայացված են դասական դրամների ոճով. դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը, դարձերեսին՝ Փարիզի Պեր-Լաշեզ գերեզմանատանը կանգնեցված Անդրանիկ Օզանյանի հուշարձանը:

Լազարյան ճեմարանի հիմնադրման 200-ամյակին նվիրված արծաթե հուշադրամը թողարկվել է «Հայաստանի մշակույթ» թեմատիկ շարքի «Մշակույթի պատմություն» ենթաթեմայի շրջանակում: Հուշադրամն ուշագրավ է իր դիզայնով. դիմերեսին և դարձերեսին պատկերված են Լազարյան ճեմարանի իրար լրացնող հատվածները:

2015 թ. առանձնահատուկ նշանակություն ունեցավ համայն հայության համար. լրացավ 1915 թ. Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը: Ի հիշատակ այդ ողբերգության՝ ՀՀ կենտրոնական բանկը Լիտվայի դրամահատարանի հետ համագործակցության արդյունքում թողարկեց «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելից» արծաթե հուշադրամը: Հուշադրամի դիմերեսին ու դարձերեսին պատկերված են Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթողները, որոնք կանգնեցվել են աշխարհի տարբեր երկրներում: Այն բացառիկ է բովանդակությամբ և կատարումով: ԿԲ ներհին մրցույթում «**Հայոց ցեղասպանության 100-րդ տարելից**» հուշադրամը ճանաչվել է **Տարվա լավագույն հուշադրամ**:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը նշանավորվեց համաշխարհային լայնածավալ միջոցառումներով: ՀՀ կենտրոնական բանկը նախաձեռնեց «Անմոռուկ» հուշամեդալի և «Կորսի ու պայքարի կոթողներ» ու «Նահատակված հայ մտավորականներ» հուշամեդալների շարքի թողարկման խոշոր ծրագիր, որն ընդգրկում է 15 տեսակի արծաթե հուշամեդալներ: Հուշամեդալների պատրաստումն իրականացվել է Լեհաստանի դրամահատարանում՝ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ (Multi View Minting, Minted Photo Image):

2015 թ. ՀՀ կենտրոնական բանկի բոլոր թողարկումներն ուղեկցվում են իսկության հավաստագրերով ու տեղեկատվական բուկլետներով, որոնցում ներկայացվում են տվյալ հուշադրամի տեխնիկական բնութագիրը և իրադարձությունը, որին նվիրված է այդ թողարկումը:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելից

Թեմա՝ Հայաստանի պատմություն

Անվանական արժեքը	**100 դրամ**
Մետաղը և հարգը	**արծաթ 925⁰**
Քաշը	**67,2 գ**
Տրամագիծը	**50,0 մմ**
Ռակը	**սովորական (հնաձև)**
Դրամաշուրթը	**հարթ**
Տոհմանակը	**1000 հաս**

Էսքիզների հեղինակներ՝ Սուրեն Սիմոնյան և Արամ Ուռուչյան:
Հատվել է Լիտվայի դրամահատարանում:
Շրջանառության մեջ է դրվել 27. 02. 2015 թ.:

Դիմերես՝ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթողներ (աջից ձախ). սգվոր մոր հուշարձան (Իժևսկ, ՌԴ, 2010 թ., հեղինակ՝ Թ. Աբրամիձե), Կոմիտասին նվիրված հուշարձան (Փարիզ, Ֆրանսիա, 2003 թ., հեղինակ՝ Դ. Երևանցի), խաչքար-հուշարձան (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Հայաստան, 1965 թ., հեղինակ՝ Ռ. Խորայելյան), հուշապատ-խաչքար (Գլենդել, ԱՄՆ, 2000 թ., հեղինակ՝ Ք. Քարիբյան): Ներքևում՝ հատված Ծիծեռնակաբերդի հուշահամալիրից (Երևան, Հայաստան, 1967 թ., ճարտարապետներ՝ Ա. Թարխանյան, Ս. Քալաշյան):

Դարձերես՝ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթողներ (աջից ձախ). հուշարձան՝ հայ հայդուկներին (Ուջան, Հայաստան, 1989 թ., հեղինակ՝ Յու. Մինասյան), հուշակոթողի մի հատված արծվի տեսքով (Հալեպ, Սիրիա, 1990 թ., հեղինակներ՝ Վ. Բերթիզյան, Գ. Երամյան), հուշաախտակի մի հատված՝ կնոջ հանդակ (Սան Պաուլու, Բրազիլիա, 1966 թ., հեղինակ՝ Խոսե Հերեզ Ռեկալդե), խաչքար (Անտվերպեն, Բելգիա, 2003 թ., հեղինակ՝ Հ. Սոֆոյան): Ներքևում՝ հատված Ծիծեռնակաբերդի հուշահամալիրից:

Հայոց ցեղասպանությունն իրականացվել է Առաջին համաշխարհային պատերազմի (1914–1918 թթ.) և դրան հաջորդող տարիներին Թուրքիայի (Օսմանյան կայսրություն) կառավարող շրջանների կողմից: Գլխավոր կազմակերպիչներն էին երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավարները:


Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի և Օսմանյան կայսրության մյուս նահանգների հայ բնակչությունը ենթարկվել է զանգվածային տեղահանության ու բնաջնջման: Պատերազմի սկզբին թուրքական բանակ է զորակոչվել 18-45 տարեկան մոտ 60 հազար հայ, այ-



սիևմն՝ բնակչության առավել մարտունակ մասը, որը շուտով ոչնչացվել է Թուրքիայի ռազմական նախարարի հրամանով: 1915 թ. ապրիլի 24-ին և հաջորդ օրերին Կ. Պոլսում ձերբակալվել և Անատոլիայի խորհրդարանի պատգամավորներ՝ գրող Գրիգոր Զոհրապը, ակադեմիկոս Նազարեթ Տաղավարյանը և ուրիշներ: Երիտթուրքերը ոչնչացրել են Թուրքիայում գործող սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության գրասենյակները, իսկ ղեկավար գործիչներից 20-ը (այդ թվում՝ Փարամազը (Մաթեոս Սարգիսյան), Վանիկը (Գեղամ Վանիկյան), բժիշկ Պեննէէն (Պետրոս Մանուկյան)) 1915 թ. կախաղան են բարձրացվել Կ. Պոլսի հրապարակներից մեկում: Այնուհետև սկսվել է հայ բնակչության զանգվածային կոտորածն ու տեղահանությունը դեպի Միջագետքի անապատներ և Սիրիա: Ճանապարհին հարյուր հազարավոր մարդիկ զոհ էին դառնում նաև ավազակախմբերի հարձակումներին ու սովին:









Սակայն որոշ բնակավայրերում հայ բնակչությունը հերոսական դիմադրություն է ցույց տվել թուրք ջարդարարներին: 1915 թ. Վանի, Շաթինի Գարահիսարի, Շատախի, Մուսա լեռան, Մուշի, Սասունի, 1920-1921 թթ. Հաճընի և Այնթափի ինքնապաշտպանական կռիվները ազգային-ազատագրական պայքարի հերոսական էջերից են և նպաստել են հայ ժողովրդի որոշ հատվածի փրկությանն ու վերադրումին:

Թուրքական իշխանությունների իրականացրած հայերի ցեղասպանությանը զոհ է դարձել 1,5 մլն մարդ, մոտ 800 հազար հայ ցրվել է աշխարհով մեկ: Արևմտյան Հայաստանը դատարկվել է բնիկ հայ բնակչությունից: Վիթխարի վնաս է հասցվել հայ ժողովրդի նյութական և հոգևոր ձեռքբերումներին. կողոպտվել են հազարավոր եկեղեցիներ ու դպրոցներ, ավերվել հարյուրավոր պատմական հուշարձաններ, ոչնչացվել բազմաթիվ ձեռագրեր:

Ցեղասպանության պատժելիությունը սահմանվել է միջազգային զինվորական դատարանների կանոնադրություններով, ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովի բանաձևերով ու «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիայով (1948 թ.):



Վերջին տասնամյակներում հայերի ցեղասպանությունը ճանաչվել է որպես ծանրագույն հանցանք մարդկության դեմ և դատապարտվել ավելի քան 20 պետությունների ու մի շարք միջազգային կազմակերպությունների կողմից:

Լազարյան ճեմարանի *հիմնադրման* 200-*ամյակ*

Թեմա՝ Հայաստանի մշակույթ *(մշակույթի պատմություն)*

Անվանական արժեքը	**1000 դրամ**
Մետաղը և հարգը	**արծաթ 925⁰**
Քաշը	**33,6 գ**
Տրամագիծը	**40,0 մմ**
Ոռակը	**պրուֆ**
Դրամաշուրթը	**ատամնավոր**
Տոփանակը	**500 հատ**

Էսքիզների հեղինակ՝ Էդուարդ Կուրղինյան:
Հատվել է Լիտվայի դրամահատարանում:

Շրջանառության մեջ է դրվել 27. 02. 2015 թ.:

Դիմերես՝ Հովհաննես Լազարյանը, Լազարյան ճեմարանի շենքի աջ մասը և ճեմարանի շրջանավարտներին շնորհվող կրծանշանը:

Դարձերես՝ Հովակիմ Լազարյանը, Լազարյան ճեմարանի շենքի ձախ մասը և ճեմարանի հուշամեդալը:

Լազարյան ճեմարանը ուսումնական հաստատություն է, հայագիտական և արևելագիտական խոշոր կենտրոն:

Հիմնվել է 1815 թ. Մոսկվայում, մեծահարուստ Լազարյան եղբայրների նախաձեռնությամբ և միջոցներով: Սկզբում կոչվել է Հայկական Լազարյան ուսումնարան, որտեղ հանրակրթական առարկաների հետ դասավանդվել են նաև արևելյան լեզուներ: 1827 թ. վերանվանվել է Արևելյան լեզուների Լազարյան ինստիտուտ (հայկական աղբյուրներում ավանդաբար կոչվել է Լազարյան ճեմարան): Հետագայում ճեմարանին կից բացվել է հոգևոր բաժին՝ հայ եկեղեցու սպասավորներ և հոգևոր դպրոցների ուսուցիչներ պատրաստելու նպատակով: 1872 թ. կանոնադրությամբ ճեմարանն ունեցել է ուսումնական երկու հատատություն՝ դասական գիմնազիա և եռամյա ուսուցմամբ արևելյան լեզուների ֆակուլտետ, որը մակարդակով համապատասխանել է բարձրագույն ուսումնական հաստատությանը:



Հովակիմ Աղազարի Լազարյան



Հովհաննես Աղազարի Լազարյան



Ուսուցման լեզուն ռուսերենն էր, սակայն հայագիտական առարկաները դասավանդվել են հայերեն: Ճեմարանի տնօրենությունը, ուսուցչական և դասախոսական կազմի մեծ մասը հայեր էին: Ճեմարանում դասավանդել են Ս. Կարնեցին (առաջին ռեկտորը), Հ. Ալամդարյանը, Մ. Նալբանդյանը, Ա. Տիգրանյանը և այլ ճանաչված գործիչներ. նրանց մի մասը ճեմարանի նախկին սաներ էին: Այստեղ են ուսանել Ռ. Պատկանյանը, Հ. Հովհաննիսյանը, Վ. Տերյանը, Վ. Սուրենյանցը, Ա. Մյասնիկյանը, ինչպես նաև Լ. Տոլստոյը, Ի. Տուրգենևը, Կ. Ստանիսլավսկին, Մ. Գլինկան:



Ճեմարանը պատրաստել է թարգմանիչներ, դիվանագետներ, արևելյան լեզուների մասնագետներ: Ունեցել է դրամադարան, որտեղ պահվել են տարբեր ժամանակների դրամներ և այլ հնագիտական իրեր: Ճեմարանում գործող տպարանը լույս է ընծայել 13 լեզուներով գրականություն, իսկ գրադարանի հավաքածուն (1913 թ.՝ 40 հազար գիրք) հետագայում դարձել է Երևանի ազգային գրադարանի հիմնադրամներից մեկը:

Այժմ ճեմարանի շենքում տեղակայված է Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության դեսպանությունը:

Փանոս Թերլեմեզյանի *ծննդյան* 150-*ամյակ*

Թեմա՝ Անվանի անհատներ *(կերպարվեստ)*


Անվանական արժեքը	**100 դրամ**
Մետաղը և հարգը	**արծաթ 925⁰**
Քաշը	**28,28 գ**
Չափը	**28,0 x 40,0 մմ**
Ոռակը	**լավացված**
Դրամատուրքը	**հարթ**
Տպաքանակը	**500 հատ**

Էսքիզների հեղինակ՝ Լուսինե Լալայան:
Հատվել է Լիտվայի դրամահատարանում:

Շրջանառության մեջ է դրվել 27. 02. 2015 թ.:

Դիմերես՝ Փանոս Թերլեմեզյանի «Վանա լիճը և Սիփան սարը Կտուց կղզուց» կտավից դրվագ:

Դարձերես՝ Թերլեմեզյանի «Ինքնանկարը» և «Տաքևի վանքը» կտավից դրվագ:



ՓԱՆՈՍ ԹԵՐԼԵՄԵԶՅԱՆԸ (1865-1941 թթ.) հայ նկարիչ է, ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ:

Ծնվել է Արևմտյան Հայաստանի Վան քաղաքում: Սովորել է Պետերբուրգի Գեղարվեստը խրախուսող ընկերության դպրոցում: 1898 թ. մեկնել է Փարիզ, սովորել Ժյուլիան ակադեմիայում: 1900-ական թթ. ստեղծել է «Աշխատավորուհին աղբյուրի մոտ. Բրեսան», «Բնանկար. Բրեսան», «Սանահինի վանքի գավիթը» կտավները. Վերջին կտավի համար Մյունխենի համաեվրոպական ցուցահանդեսում (1913 թ.) արժանացել է ոսկե մեդալի:



1910-1912 թթ. աորել է Կ. Պոլսում, այնուհետև վերադարձել Վան, եղել Վանի 1915 թ. հերոսամարտի ղեկավարներից: Այդ տարիների գործերից պահպանվել է միայն «Սիփան սարը Կտուց կղզուց» բարձրարվեստ կտավը: Թերլեմեզյանը 1916 թ. Թիֆլիսում մասնակցել է Հայ արվեստագետների միության կազմակերպմանը, հետագայում ղեկավարել այդ միության Դոնի Ռոստովի մասնաճյուղը:

1919-1922 թթ. աորել և ստեղծագործել է Կ. Պոլսում, Իտալիայում, Ֆրանսիայում, 1923 թ-ից՝ ԱՄՆ-ում, ստեղծել գունային մեղմ ներդաշնակությամբ աչքի ընկնող բնանկարներ, նատյուրմորտներ («Լա Մանշի ափերը», «Նիագարայի ջրվեժը», «Նատյուրմորտ: Նռներ»): 1928 թ. վերադարձել է Երևան, մասնակցել հայ արդի արվեստի կազմավորմանը, ստեղծել երևանյան բնաոատկերներ, «Տաքևի վանքը» (1929 թ.), «Ջորագետ» (1930 թ.), «Ալավերդի» (1931 թ.), «Սևանի ափերը» (1937 թ.) և այլ բարձրարժեք կտավներ, որոնց բնորոշ են ճշգրտությունը, նուրբ երանգավորումն ու երփնագրի թարմությունը: Թերլեմեզյանը զբաղվել է նաև դիմանկարչությամբ. նկարել է Կոմիտասի, Գ. Բաշինջաղյանի, Ա. Իսահակյանի, զորավար Անդրանիկի, Ռ. Մելիքյանի, Ա. Բակունցի, Հ. Աճառյանի և ուրիշների դիմանկարները:

Նկարչի մահից հետո նրա ողջ ժառանգությունը՝ համաձայն իր կտակի, ընծայվել է Հայաստանի ազգային պատկերասրահին: Թերլեմեզյանի անունով է կոչվում Երևանի գեղարվեստի պետական ինստիտուտը:



Անդրանիկ Օզանյանի *ծննդյան* 150-*ամյակ*

Թեմա՝ Հայոց պեսականություն
(հայ զորավարներ)

Անվանական արժեքը	**1000 դրամ**
Մետաղը և հարգը	**արծաթ 925⁰**
Քաշը	**33,6 գ**
Տրամագիծը	**40,0 մմ**
Ոռակը	**պրուֆ**
Դրամաշուրթը	**ատամնավոր**
Տոպաճակը	**500 հաս**

Էսիզների հեղինակ՝ Լուսինե Լալայան:
Հատվել է Լիտվայի դրամահատարանում:

Շրջանառության մեջ է դրվել 27. 02. 2015 թ.:

Դիմերես՝ ՀՀ զինանշանը:

Դարձերես՝ Փարիզի Պեր-Լաշեզ գերեզմանատանը կանգնեցված Անդրանիկի հուշարձանը (հեղինակագործ՝ Լեոն Մուրդոֆ):





ԱՆԴՐԱՆԻԿ ՕԶԱՆՅԱՆԸ (Զորավար Անդրանիկ, 1865-1927 թթ.) հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ է, զորավար:

Ծնվել է Արևմտյան Հայաստանի Ծաղին Գարահիսար գաղութում:

1890-ական թվականներից սկիզբ է Հայ ազատագրական շարժման գործին, անհաշ ոչխար ծավալել թուրքական բռնակալության դեմ, դարձել խիզախ ֆիդայի: Աղբյուր Սերոբի խմբում մարտնչել է Տարոնում, Մասունում, նրա զոհվելուց հետո գլխավորել հիմնադաշտոլանական մի շարք մարտեր: 1905 թ. գենի հայթայթելու նպատակով մեկնել է Ժնև, ապա՝ Վիեննա: Ընդհանրացնելով հայ ազատագրական պայքարի փորձը՝ 1906 թ. շարադրել է պարտիզանական շարժման կազմակերպմանը նվիրված «Մարտական հրահանգներ» ձեռնարկիրը: Այցելել է Ֆրանսիա, Բելգիա, Անգլիա, բնակվել Վառնայում, որտեղ սերտ կապեր է հաստատել բուլղար հեղափոխականների և ազգային գործիչների հետ: Բուլղարական բանակի կազմում Անդրանիկը մարտնչել է թուրքական զորքերի դեմ: Առաջին աշխարհամարտը սկսվելուն պես, 1914 թվականին, տեղափոխվել է Թիֆլիս և նշանակվել Հայկական կամավորական 1-ին ջոկատի (Ռուսական կայսրության Կովկասյան բանակի կազմում) հրամանատար, բազմիցս աչքի ընկել մարտական սխրանքներով, ղեկավարել շուրջ 20 հաղթական ռազմական գործողություններ, որոնցում դրսևորվել են նրա ռազմական տաղանդը, մարտական գործողություններ վարելու արվեստը, խիզախությունը, հոգատար վերաբերմունքը զինվորների նկատմամբ:

1919 թ. մեկնել է արտասահման, ուր ծավալել է հասարակական լայն գործունեություն, օգնել հայ գաղթականներին:

Մեծ զորավարը մահացել է 1927 թ. ԱՄՆ-ի Ֆրեզնո քաղաքում: 1928 թ. նրա աճյունը տեղափոխվել է Փարիզ, վերաթաղվել Պեր-Լաշեզ գերեզմանատանը, իսկ այդտեղից 2000 թ.՝ Հայաստան, և վերջնական հանգրվան գտել Երևանի Եռաբլուր պանթեոնում:

Անդրանիկը թողել է արժեքավոր երկեր, հուշեր, հոդվածներ: Աշխարհի մի շարք երկրներում (Հայաստան, Բուլղարիա, Ֆրանսիա, Ռումինիա) նրա անունով կոչվում են հրապարակներ, փողոցներ, դպրոցներ, նրա պատվին տեղադրված են արձաններ և հուշատախտակներ, նրան նվիրված են ժողովրդական երգեր, գրեր և հոդվածներ:

Եվրասիական տնտեսական միություն

Թեմա՝ Հայաստանը և միջազգային հանրությունը

Անվանական արժեքը	**1000 դրամ**
Մետաղը և հարգը	**արծաթ 925⁰**
Քաշը	**33,6 գ**
Տրամագիծը	**38,60 մմ**
Ոռակը	**պրուֆ**
Դրամատուրգը	**ատամնավոր**
Տպաքանակը	**300 հատ**

Էսքիզների հեղինակ՝ Հարություն Սամուելյան:
Հատվել է Լեհաստանի դրամահատարանում:

Շրջանառության մեջ է դրվել 16. 11 .2015 թ.:

Դիմերես՝ ՀՀ զինանշանը:

Դարձերես՝ ԵԱՏՄ պատկերանիշը՝ անդամ-պետությունների դրոշների գունային ֆոնի վրա:

Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագիրը ստորագրվել է 2014 թ. մայիսի 29-ին և ուժի մեջ է 2015 թ. հունվարի 1-ից: Ներկայումս Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) անդամ-պետություններն են՝ Հայաստանի Հանրապետությունը, Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը, Ղրղզստանի Հանրապետությունն ու Ռուսաստանի Դաշնությունը:

Միության բարձրագույն մարմինը Եվրասիական տնտեսական Միության բարձրագույն խորհուրդն է, որը





ներկայացված է ԵԱՏՄ անդամ-պետությունների նախագահներով: Միջկառավարական Եվրասիական տնտեսական խորհուրդը՝ ԵԱՏՄ անդամ-պետությունների կառավարությունների ղեկավարների նախագահությամբ, և Եվրասիական տնտեսական հանձնաժողովը Միության մշտական գործող մարմիններն են, որոնց հիմնական խնդիրներն են՝ ԵԱՏՄ գործունեության և զարգացման պայմանների ապահովումը, ինչպես նաև Միության շրջանակներում տնտեսական ինտեգրացիայի բնագավառում առաջարկների մշակումը: ԵԱՏՄ-ի մասին պայմանագրի և Միության շրջանակներում այլ միջազգային պայմանագրերի պատշաճ կատարումը վերահսկվում է Միության դատական մարմնի՝ ԵԱՏՄ դատարանի կողմից:

ԵԱՏՄ-ի նպատակն է՝ անդամ-պետությունների տնտեսությունների բազմակողմանի արդիականացումը, համագործակցությունը, մրցունակության բարձրացումը և բնակչության կենսամակարդակի համար կայուն պայմանների ստեղծումը: ԵԱՏՄ-ում ապահովվում է ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի ազատ տեղաշարժ, ինչպես նաև համակարգված, համաձայնեցված կամ միասնական հաղորդակցության վարում տնտեսության բնագավառում: 2015 թ. սկզբին անդամակցելով ԵՏԱՄ-ին՝ Հայաստանի Հանրապետությունը լիամասնաբար կերդով ընդգրկվեց տարածաշրջանային տնտեսական ինտեգրման ամրապնդմանն ու ընդլայնմանն ուղղված խնդիրների իրագործմանը:



ՀՀ սահմանադրական դատարանի 20-ամյակ

Թեմա՝ Հայաստանի պատմություն

Անվանական արժեքը	**1000 դրամ**
Մետաղը և հարգը	**արծաթ 925⁰**
Քաշը	**33,6 գ**
Տրամագիծը	**40,0 մմ**
Ոռակը	**պրուֆ**
Դրամաշուրջը	**ատամնավոր**
Տոփաճակը	**500 հատ**

Էսքիզների հեղինակ՝ Էդուարդ Կուրղինյան:
Հատվել է Լեհաստանի դրամահատարանում:

Շրջանառության մեջ է դրվել 16. 11. 2015 թ.:



Դիմերես՝ ՀՀ զինանշանը:

Դարձերես՝ ՀՀ սահմանադրական դատարանի շենքի ուրվագիծը և հունական արդարադատության աստվածուհու՝ Թեմիդայի գունավորված առձանը:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքն ընդունվել է ՀՀ Ազգային Ժողովի կողմից 1995 թ. նոյեմբերի 20-ին: ՀՀ սահմանադրական դատարանն իր գործունեության առաջին իսկ տարվանից (1996 թ.) անդամակցել է Եվրոխորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովին (Վենետիկի հանձնաժողով): Այդ համագործակցությունը սկիզբ է դրել մի ուշագրավ ավանդույթի, ինչն արտահայտվել է Երևանյան միջազգային ամենամյա խորհրդաժողովների կազմակերպմամբ: 1997 թ. հիմնադրվել է «Երիտասարդ ժողովրդավարության երկրների սահմանադրական դատարանների կոնֆերանս» միջազգային կազմակերպությունը, որի աշխատանքները համակարգում է ՀՀ սահմանադրական դատարանը: Իսկ 2000 թ., երբ Հայաստանը դեռևս Եվրոխորհրդի անդամ չէր, Սահմանադրական դատարանն ընտրվել է «Եվրոպական երկրների սահմանադրական դատարանների միջազգային կոնֆերանս» կազմակերպության լիիրավ անդամ, ինչը սահմանադրական դատարանի՝ միջազգային չափանիշներին համապատասխանելու վկայությունն է:



ՀՀ սահմանադրական դատարանի հովանու ներքո հրատարակվում են մի շարք մարքերականներ («Սահմանադրական արդարադատություն» երկլեզու բանբեր, «Սահմանադրական արդարադատությունը նոր հազարամյակում» միջազգային համալեզու տարեգիրք, «ՀՀ սահմանադրական դատարանի տեղեկագիր»), մենագրություններ, գիտական հոդվածներ, որոնց նկատմամբ մեծ հետաքրքրություն են դրսևորում 100-ից ավելի երկրների՝ այս ոլորտի բազմաթիվ մասնագետներ ու սահմանադրական արդարադատության մարմիններ:



ՀՀ կենտրոնական բանկը Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված ոսկեայ ծրագրի շրջանակում թողարկել է **«Անմոռուկ»** արծաթե հուշամեդալը, **«Նահատակված հայ մտավորականներ»** և **«Կորսի ու պայքարի կոթողներ»** արծաթե հուշամեդալների շարքերը:









Հիշում եմ և պահանջում

Անմոռուկ

Մետաղը և հարգը	**արծաթ 925°**
Քաշը	**17,5 գ**
Տրամագիծը	**32,0 մմ**
Որակը	**դրուֆ**
Դրամատուրքը	**ատամնավոր**
Տպաքանակը	**1000 հատ**

Հուշամեդալի էսքիզների հեղինակ՝
Արամ Ուռույան:
Հատվել է Լեհաստանի դրամահատարանում:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի խորհրդանշանը Անմոռուկ ծաղիկն է, որի անվանման ստուգաբանությունը տարբեր լեզուներով արտահայտում է միևնույն իմաստը՝ «ՀԻՇԻՐ»: Ծաղկի հինգ պսակաթերթիկները խորհրդանշում են հինգ մայրցամաքները, որտեղ հանգրվան են գտել ցեղասպանությունից մազապուրծ հայորդիները՝ զրկվելով հայրենիքում ապրելու հնարավորությունից: Սփռվելով աշխարհով մեկ՝ այսօր էլ նրանք դատապարտում են ցեղասպանությունը՝ **Հիշում եմ և պահանջում**: Ծաղիկն ունի չորս հիմնական գունային բաղադրիչներ, որոնցից յուրաքանչյուրը կրում է որոշակի իմաստ: Սև գույնը խորհրդանշում է ցեղասպանության մասին հիշողությունը, բաց մանուշակագույնը՝ միավորվելու գաղափարը, մանուշակագույնը՝ ազգային ինքնագիտակցությունը, իսկ դեղինով պատկերված է ապրելու և արարելու հույս պարգևող արևի լույսը՝ Ծիծեռնակաբերդի հուշահամալիրը խորհրդանշող, շրջանաձև դասավորված 12 մոյթերի տեսքով:



Հիշում եմ և պահանջում

Նահատակված հայ մտավորականներ

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված «Նահատակված հայ մտավորականներ» արծաթե հուշամեդալների շարքը ներառում է 8 հուշամեդալ:

Մետաղը և հարգը	**արծաթ 925°**
Քաշը	**17,5 գ**
Տրամագիծը	**32,0 մմ**
Որակը	**պրուֆ**
Դրամաշուրթը	**ատամնավոր**
Տպաքանակը	**1000 հատ**

Հուշամեդալի էսքիզների հեղինակ՝
Արամ Ուռույան:
Հատվել է Լեհաստանի դրամահատարանում:

Դիմերես՝ ՀՀ զինանշան, ներքևում՝ Ծիծեռնակաբերդի հուշահամալիր (Երևան, 1967 թ., ճարտարապետներ՝ Ա. Թարխանյան, Ս. Քալաշյան):

Դարձերեսներ՝ պատկերված են Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը խորհրդանշող Անմոռուկ ծաղիկը՝ «ՀԻՇՈՒՄ ԵՄ ԵՎ ՊԱՀԱՆՋՈՒՄ / I REMEMBER AND DEMAND» գրառմամբ, մտավորականներ Դանիել Վարուժանի, Թլկատինցու, Սիամանթոյի, Ռուբեն Սևակի, Նազարեթ Տաղավարյանի, Ռուբեն Զարդարյանի և Գրիգոր Զոհրապի դիմապատկերները (ձախից)՝ ծննդյան ու նահատակության թվագրմամբ:



Հիշում եմ և պահանջում

Կորսի և պայքարի կոթողներ

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված «Կորսի և պայքարի կոթողներ» արծաթե հուշամեդալների շարքը ներառում է 8 հուշամեդալ:

Մետաղը և հարգը	**արծաթ 925⁰**
Քաշը	**17,5 գ**
Տրամագիծը	**32,0 մմ**
Որակը	**պրուֆ**
Դրամաշուրջը	**ատամնավոր**
Տպաքանակը	**1000 հատ**

Հուշամեդալի էսքիզների հեղինակ՝
Արամ Ուռույան:
Հատվել է Լեհաստանի դրամահատարանում:

Դիմերես՝ ՀՀ զինանշան, ներքևում՝ Ծիծեռնակաբերդի հուշահամալիր (Երևան, 1967 թ., ճարտարապետներ՝ Ա. Թարխանյան, Ս. Քալաշյան):

Դարձերեսներ՝ պատկերված են Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը խորհրդանշող Անմոռուկ ծաղիկը՝ «ՀԻՇՈՒՄ ԵՄ ԵՎ ՊԱՀԱՆՋՈՒՄ / I REMEMBER AND DEMAND» գրառմամբ, Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի ավերված ու կողոպտված հուշակոթողները՝ Վարագավանք (VII դար), Գլակավանք (IV դար), Նարեկավանք (X դար), Մըշ Սբ Առաքելոց վանք (IV դար), Սսի կաթողիկոսարան (XIII դար), Հուշարձան հայ հայդուկներին (1989 թ., հանդակագործ Յու. Մինասյան)՝ «Փա՛ռք հերոսներին» գրառմամբ, Վանի բերդ (Ք.ա. IX դար)՝ 1915 թ. Վանի հերոսամարտի հիմնակետը:

Հայաստանի Հանրապետության հուշադրամները ըստ շարքերի և թողարկման տարեթվերի

(1994 - 2015)

ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Արցախ	(արծաթ, 1994 թ.)
Ազգային ժողովի շենքը	(արծաթ, 1995 թ.)
Արտաեսյան թագավորություն	(արծաթ, 1995 թ.)
Արշակունյաց թագավորություն	(արծաթ, 1995 թ.)
Բագրատունյաց թագավորություն	(արծաթ, 1995 թ.)
Կիլիկյան թագավորություն	(արծաթ, 1995 թ.)
Հայաստանի Հանրապետության 10-ամյակ (1991-2001)	(արծաթ, 2001 թ.)
Հայաստանի Հանրապետության 15-ամյակ (1991-2006)	(արծաթ, 2006 թ.)
Հայաստանի Հանրապետության 20-ամյակ (1991-2011)	(արծաթ, 2011 թ.)

Հայաստանի զինված ուժեր

Հայաստանի զինված ուժեր	(ոսկի / արծաթ, 2005 թ.)
Հայոց բանակի կազմավորման 15-ամյակ	(ոսկի, 2007 թ.)
Շուշիի ազատագրման 15-ամյակ	(ոսկի, 2007 թ.)
Հայոց բանակի կազմավորման 20-ամյակ	(ոսկի / արծաթ, 2012 թ.)
Շուշիի ազատագրման 20-ամյակ	(ոսկի, 2012 թ.)

Հայ զորավարներ

Մարշալ Բաղրամյան-100	(արծաթ, 1997 թ.)
Գարեգին Նժդեհ	(արծաթ, 2001 թ.)
Մարշալ Բաբաջանյան-100	(արծաթ, 2006 թ.)
Անդրանիկ Օզանյան-150	(արծաթ 2015 թ.)

Հայկական դրամներ

Ճախարակ	(արծաթ, 1994 թ.)
Ազգային դրամի 5 տարին	(արծաթ, 1998 թ.)
Ազգային դրամի 15 տարին	(արծաթ, 2008 թ.)
Ազգային դրամի 20 տարին	(արծաթ, 2013 թ.)

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԸ

ՄԱԿ-50	(արծաթ, 1995 թ.)
Հայաստան-Սփյուռք համաժողով	(արծաթ, 1999 թ.)
Նոր հազարամյակ	(արծաթ, 2000 թ.)
Հայաստանը Եվրախորհրդի անդամ	(արծաթ, 2001 թ.)
Միջազգային բևեռային տարի	(արծաթ, 2006 թ.)
Վիեննայի Մխիթարյան միաբանության հիմնադրման 200-ամյակ	(արծաթ, 2011 թ.)
Հավաճական անվտանգության մասին ղայմանագրի ստորագրման և կազմակերպության տարեդարձեր	(արծաթ, 2012 թ.)
Եվրասիական տնտեսական միություն	(արծաթ 2015 թ.)

ԱՆՎԱՆԻ ԱՆՀԱՏՆԵՐ

Գրականություն

Պուշկին-200	(արծաթ, 1999 թ.)
Վիլյամ Սարոյան-100	(ոսկի, 2008 թ.)
Խաչատուր Աբովյան-200	(ոսկի, 2009 թ.)
Րաֆֆի-175	(ոսկի, 2010 թ.)
Վահան Տեր-Յան-125	(ոսկի, 2010 թ.)
Միսաք Մեծարենց-125	(ոսկի, 2011 թ.)
Հովհաննես Շիրազ-100	(ոսկի, 2014 թ.)

Կերպարվեստ

Արշիլ Գորկի-100	(ոսկի, 2004 թ.)
Մարտիրոս Սարյան-125	(ոսկի, 2005 թ.)
Հակոբ Գյուրջյան-125	(ոսկի, 2006 թ.)
Ժան Գառզու-100	(ոսկի, 2007 թ.)
Վարդգես Սուրենյանց-150	(արծաթ, 2010 թ.)
Թորոս Ռոսլին-800	(ոսկի, 2011 թ.)
Ստեփան Աղաջանյան-150	(արծաթ, 2013 թ.)
Արա Բեհրյան-100	(արծաթ, 2013 թ.)
Էդուարդ Իսաբեկյան-100	(արծաթ, 2014 թ.)
Փաոլոս Թեղեմեզյան-150	(արծաթ 2015 թ.)

Երաժշտություն

Արամ Խաչատրյան-100	(ոսկի / արծաթ 2002 թ.)
Կոմիտաս	(ոսկի, 2006 թ.)
Սայաթ-Նովա-300	(ոսկի, 2012 թ.)

Գիտություն

Աճառիա Չիրակացի-1400	(արծաթ, 2005 թ.)
Արտեմ Միկոյան-100	(արծաթ, 2005 թ.)
Վիկտոր Համբարձումյան-100	(արծաթ, 2008 թ.)
Մովսես Խորենացի-1600	(արծաթ, 2010 թ.)
Լեո-150	(արծաթ, 2010 թ.)
Հովսեփ Օրբելի-125	(արծաթ, 2012 թ.)
Բենիամին Մարգարյան-100	(արծաթ, 2013 թ.)
Ոսկան Երևանցի-400	(արծաթ, 2014 թ.)

Կինո, թատրոն, կրկես

Լեոնիդ Ենգիբարյան-75	(արծաթ, 2010 թ.)
Վահրամ Փափազյան-125	(ոսկի, 2013 թ.)

Սպորտ

Տիգրան Պետրոսյան-70	(արծաթ, 1999 թ.)

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

Սարդարապատ	(արծաթ, 1994 թ.)
Սասունցի Դավիթ	(արծաթ, 1994 թ.)
Գառնի	(արծաթ, 1994 թ.)
Գանձասարի վանք	(արծաթ, 2004 թ.)
Հայաստանի վանքեր և եկեղեցիներ (Սբ Էջմիածնի Մայր տաճար, Նորավանք, Գնդեվանք, Սանահին, Գոշավանք, Կեչառիս)	(արծաթ, 2012 թ.)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹ

Մշակույթի պատմություն

Հայոց գրերի գյուտի 1600-ամյակ	(ոսկի, 2002 թ.)
«Մաշյան ողբերգության» պոեմի 1000-ամյակ	(արծաթ, 2002 թ.)
Սահակ Ա Պարթև	(արծաթ, 2005 թ.)
Վռամշապուհ արքա	(արծաթ, 2005 թ.)
Մխիթար Գոշի «Գիրք Դատաստանի» 825-ամյակ	(արծաթ, 2009 թ.)
Գլաձորի համալսարանի 725-ամյակ	(արծաթ, 2009 թ.)
Ավետարանի տեսարանները հայ մանրանկարչությունում (Ավետում, Մոգերի երկրպագությունը, Մուտք Երուսաղեմ, Համբարձում)	(արծաթ, 2010 թ.)
Հայասացի խաչքարերը (Գնդեվանքի, Գոռավանքի, Կեչառիսի, Սանահինի, Էջմիածնի, Նորավանքի)	(արծաթ, 2011 թ.)
Հայ գրի տպագրության 500-ամյակ	(արծաթ, 2012 թ.)
Հայկական այբուբենի տառերը	(78 տեսակի, ոսկի / արծաթ, 2013 թ.)
Լազարյան ճեմարանի հիմնադրման 200-ամյակ	(արծաթ, 2015 թ.)

Գիտություն, գրականություն, արվեստ

Հովհաննես Այվազովսկի	(արծաթ, 2006 թ.)
Մատենադարան-50	(արծաթ, 2007 թ.)
Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի հիմնադրման 75-ամյակ	(արծաթ, 2008 թ.)
Ջազ	(արծաթ, 2010 թ.)
Թեոդոր Ախենյովիչ	(արծաթ, 2010 թ.)
Սերգեյ Փարաջանով	(արծաթ, 2012 թ.)

Դիցաբանություն

Անահիտ Աստվածուհի	(ոսկի, 1997 թ.)
Նոյի վայրէջքը Արարատից	(ոսկի, 1999 թ.)
Հայկ Նահապետ	(ոսկի, 2007 թ.)

Կրոն

Սբ Էջմիածին	(ոսկի / արծաթ, 1998 թ.)
Անի	(ոսկի/ արծաթ, 1998 թ.)
Աղթամար	(ոսկի / արծաթ, 1998 թ.)
Հաղպատ	(արծաթ, 1998 թ.)
XX դարի հայոց կաթողիկոսներ	(ոսկի, 2008 թ.)
Սուրբ Սարգիս զորավար	(ոսկի, 2009 թ.)
Սուրբ Գեղարդ	(արծաթ, 2013 թ.)
Սուրբ Գրիգոր Լուսավորչի Աջը	(արծաթ, 2014 թ.)
Սրբալույս Մյուռոնի կաթսա	(արծաթ, 2014 թ.)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Երկրաշարժի 10-ամյա տարելից	(արծաթ, 1998 թ.)
Տիգրան Մեծ	(ոսկի, 1999 թ.)
Տիգրան Մեծ	(ոսկի, 2003 թ.)
Պեսբանկի 110-ամյակ	(արծաթ, 2003 թ.)
ՀՀ վճռաբեկ դատարանի 10-ամյակ	(ոսկի 2008 թ.)
Անի -1050	(ոսկի, 2011 թ.)
Արտաշատ -2200	(ոսկի, 2011 թ.)
Նոյյան տապան	(արծաթ, 2012 թ.)
Հայոց ցեղասպանության 100-րդ տարելից	(արծաթ, 2015 թ.)
ՀՀ սահմանադրական դատարանի 20-ամյակ	(արծաթ, 2015 թ.)

ԲՆՈՒԹՅՈՒՆ

Բուսական աշխարհ

Ծիրան	(արծաթ, 1994 թ.)
Հայկական խաղող	(արծաթ, 2007 թ.)
Ծաղիկների գեղեցկությունը (Գալանուս Արյուճենկոյի, Լվածաղիկ Զանգեզուրի, Արոսենի Հայասանյան, Քրիում Ադամի)	(արծաթ, 2010-2011 թթ.)
Նուռ	(ոսկի, 2011 թ.)
Աշխարհի ամենահին ծառերը (Սխտորաբենի սոսի, Հայոյր ձիերի շագանակենի, Հրեշտակի կաղնի, Գեներալ Շերմանի ծառը)	(արծաթ, 2014 թ.)

Կենդանական աշխարհ

Կովկասյան ջրասամույր	(արծաթ / պղինձ-նիկել, 1997 թ.)
Հայկական ոռոր	(արծաթ / պղինձ-նիկել, 1998 թ.)
Կովկասի կենդանական աշխարհ Լայնականջ ոզնի Անդրկովկասյան գորշ արջ Կովկասյան անտառակատու Միջերկրածովային կրիա Առաջավորասիական ընձառյուծ Լայնաթիթ բադ Իշխան Հայկական իժ Բեզոարյան այծ Հայկական մուֆլոն Կովկասյան թավոտ բվիկ Անդրկովկասյան տակիրյան կոորգլուխ	(արծաթ, 2006-2008 թթ.)

Sports

Շախմատի 32-րդ օլիմպիադա	(արծաթ, 1996 թ., LIALOOSIN)
Շախմատի 32-րդ օլիմպիադա	(արծաթ/պղինձ-նիկել, 1996 թ., ROYAL MINT)
XVIII ձմեռային օլիմպիական խաղեր	(արծաթ, 1998 թ.)
1998 թ. ֆուտբոլի աշխարհի առաջնություն	(արծաթ, 1998 թ.)
Առաջին համահայկական խաղեր	(արծաթ, 1999 թ.)
2006 թ. ֆուտբոլի աշխարհի առաջնություն	(արծաթ, 2004 թ.)
Շախմատի 37-րդ օլիմպիադա	(ոսկի, 2006 թ.)
Ֆուտբոլի արճաճները Պելե, Էյսեբիո, Յաշին, Բեկենբաուեր, Բոնեկ	(արծաթ, 2008-2009 թթ.)
Մարիո Կեմպես, Յոհան Կրույֆ, Միշել Պլատինի	(արծաթ, 2010-2011 թթ.)
Մենամարտի արվեստը (Ջյուդո, Ուշու, Կարատե, Կոխ)	(արծաթ, 2011-2012 թթ.)
2014 թ. ֆուտբոլի աշխարհի առաջնություն	(արծաթ, 2014 թ.)

Այլ թեմաներ

Կենդանակերպի նշանները Խոյ, Ցուլ, Երկվորյակներ, Խեցգետին, Առյուծ, Կույս, Կշեռք, Կարիճ, Աղեղնավոր, Այծեղջյուր, Ջրհոս, Ձկներ	(արծաթ, 2007-2008 թթ.)
Կենդանակերպի նշանները Կշեռք, Կարիճ, Աղեղնավոր, Այծեղջյուր, Ջրհոս, Ձկներ, Խոյ, Ցուլ, Երկվորյակներ, Խեցգետին, Առյուծ, Կույս	(ոսկի, 2008-2009 թթ.)

2016 թվականի Հայաստանի Հանրապետության հուշադրամների թողարկման ծրագիր

Վարդան Մամիկոնյան-1625

Անվանական արժեքը	5000 դրամ
Մետաղը և հարգը	ոսկի 900⁰
Քաշը	4,3 գ
Տրամագիծը	18,0 մմ
Որակը	լավացված
Դրամաշուրջը	ատամնավոր
Տպաքանակը	5000 հատ

Հայաստանի Հանրապետության 25-ամյակ

Անվանական արժեքը	5000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ 925⁰
Քաշը	168,1 գ
Տրամագիծը	63,0 մմ
Որակը	դրուշ
Դրամաշուրջը	հարթ, համարակալված
Տպաքանակը	300 հատ

Արշակ Բեթվաճյան-150

Անվանական արժեքը	100 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ 925⁰
Քաշը	28,28 գ
Չափը	28,0 x 40,0 մմ
Որակը	լավացված
Դրամաշուրջը	հարթ
Տպաքանակը	500 հատ



Վարդան Մամիկոնյան

Անվանական արժեքը	200 000 դրամ
Մետաղը և հարգը	ոսկի 999,9⁰
Քաշը	100 գ
Տրամագիծը	50,0 մմ
Որակը	դրուշ
Դրամաշուրջը	ընդհատվող ատամնավոր համարակալված
Տպաքանակը	100 հատ

Հայաստանի Հանրապետության 25-ամյակ (ռուս.)

Անվանական արժեքը	5000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ 925⁰
Քաշը	168,1 գ
Տրամագիծը	63,0 մմ
Որակը	դրուշ
Դրամաշուրջը	ընդհատվող ատամնավոր համարակալված
Տպաքանակը	100 հատ

Ալեքսանդր Բաժբեուկ-Մելիքյան-125

Անվանական արժեքը	100 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ 925⁰
Քաշը	28,28 գ
Չափը	28,0 x 40,0 մմ
Որակը	լավացված
Դրամաշուրջը	հարթ
Տպաքանակը	500 հատ

Խոտակերաց Սուրբ Նշան

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ 925⁰
Քաշը	25,0 գ
Չափը	27,0 x 47,0 մմ
Որակը	դրուշ
Դրամաշուրջը	ատամնավոր
Տպաքանակը	մինչև 2500 հատ

Սուրբ Հովհաննես Մկրտչի մասունքով խաչ

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ 925⁰
Քաշը	25,0 գ
Չափը	27,0 x 47,0 մմ
Որակը	դրուշ
Դրամաշուրջը	ատամնավոր
Տպաքանակը	մինչև 2500 հատ

Սուրբ Գևորգի մասունքով խաչ

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ 925⁰
Քաշը	25,0 գ
Չափը	27,0 x 47,0 մմ
Որակը	դրուշ
Դրամաշուրջը	ատամնավոր
Տպաքանակը	մինչև 2500 հատ

ԴՐԱՄԱՀԱՏԱՐԱՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը 2015 թ. համագործակցել է Լիտվայի և Լեհաստանի դրամահատարանների հետ: Լիտվայի դրամահատարանում են հատվել «Լազարյան ճեմարանի հիմնադրման 200-ամյակ», «Փանոս Թերլեմեզյան-150», «Ավդռանիկ Օզանյան-150», «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելից» արծաթե հուշադրամները և «Ալմոռուկ», «Նահատակված հայ մտավորականներ», «Կորսի և պայֆարի կոթողներ» շարերի արծաթե հուշամեդալները, իսկ Լեհաստանի դրամահատարանում հատվել են «Եվրասիական տնտեսական միություն» և «ՀՀ սահմանադրական դատարանի 20-ամյակ» արծաթե հուշադրամները:



Լեհաստանի դրամահատարան

Լեհաստանի դրամահատարանը հիմնվել է 1766 թվականին՝ լեհ թագավոր Ստանիսլավ Օգյուստ Պոնյատովսկու հրամանով: Թագավորի նպատակն էր՝ ստեղծել այնպիսի դրամահատարան, որտեղ կհատվեն «Հին Մայրցամաքի» ամենագեղեցիկ մետաղադրամները: Լեհաստանի դրամահատարանը հատում է շրջանառու մետաղադրամներ, հուշադրամներ, հուշամեդալներ և շախմատներ: ՀՀ կենտրոնական բանկը համագործակցում է Լեհաստանի դրամահատարանի հետ 1993 թ-ից, երբ որոշում է ընդունվել թողարկել ՀՀ առաջին շրջանառու մետաղադրամները: ՀՀ-ում շրջանառության մեջ գտնվող մետաղադրամները՝ բացառությամբ 2004 թվականի նմուշի 10 դրամ անվանական արժեքով մետադրամի, հատվել են Լեհաստանի դրամահատարանում: Լեհաստանի դրամահատարանում են հատվել բազմաթիվ հուշադրամներ, հուշամեդալներ և հավաքածուներ՝ «Կոմիտաս», «Հայոց բանակի կազմավորման 15-ամյակ», «Շուշիի ազատագրման 15-ամյակ», «XX դարի հայոց կաթողիկոսներ», «Եվրասիական տնտեսական միություն», «ՀՀ սահմանադրական դատարանի 20-ամյակ», «Ալմոռուկ», «Նահատակված հայ մտավորականներ», «Կորսի և պայֆարի կոթողներ» և այլն:



Լիտվայի դրամահատարան

Լիտվայի դրամահատարանը պաշտոնապես հիմնադրվել է 1990 թ. դեկտեմբերի 10-ին, Վիլնյուսում: Նախնական շրջանում դրամահատարանը հատում էր միայն շրջանառու մետաղադրամներ, իսկ 1993 թ-ից սկսել է հատել նաև հուշադրամներ: Լիտվայի դրամահատարանը համագործակցում է նաև այլ երկրների կենտրոնական բանկերի հետ, որոնք չունեն իրենց սեփական դրամահատարանը (Հայաստան, Ղազախստան, Բելառուս, Լատվիա, Էստոնիա և այլն): ՀՀ կենտրոնական բանկի հետ Լիտվայի դրամահատարանը համագործակցում է 2001 թ-ից:

Լիտվայի դրամահատարանում են հատվել բազմաթիվ հուշադրամներ, այդ թվում՝ 2014-2015 թթ. և 2016-2017 թթ. ՀՀ հուշադրամների թողարկման ծրագրերով նախատեսված հուշադրամները՝ «Լազարյան ճեմարանի հիմնադրման 200-ամյակ», «Փանոս Թերլեմեզյան-150», «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելից», «Ավդռանիկ Օզանյան-150», «Վարդան Մամիկոնյան-1625», «Ալեխսանդր Բաժբեուկ-Մելիխյան-125» և այլն:



Մխսորաշենի սոսի

Հրեշտակի կաղնի

Հարյուր ձիերի շագանակենի

Գեներալ Շերմանի ծառը

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻՆ

Միջազգային մրցույթ - 2015

ՀՀ կենտրոնական բանկի կողմից 2014 թ. թողարկված «Աշխարհի ամենահին ծառերը» արծաթե հուշադրամների շարքը ներկայացվել է Մոսկվայում կայացած **«Դրամների համաստեղություն-2015»** հուշադրամների իններորդ միջազգային մրցույթին և արժանացել երրորդ մրցանակի՝ **«Տարվա հավաքածու»** անվանակարգում:

«Աշխարհի ամենահին ծառերը»

Հուշադրամները ձևավորվել և **հատվել են Լեհաստանի դրամահատարանում**:

Մրցույթին մասնակցել է **46 կազմակերպություն և ներկայացվել ավելի քան 240 հուշադրամ և հուշադրամների 23 հավաքածու**:







Միջազգային մրցույթ - 2015

2014 թ. ՀՀ կենտրոնական բանկի թողարկած **«Հայաստանի վայրի ծառերը»** շրջանառու հիշատակային մետաղադրամների շարքը Արժութային հարցերով միջազգային ասոցիացիայի կողմից Մադրիդում կազմակերպված միջազգային դրամագիտական մրցույթում արժանացել է պատվավոր մրցանակի՝ **«Լավագույն հիշատակային շրջանառու մետաղադրամ - 2015»** անվանակարգում:

«Հայաստանի վայրի ծառերը»

շարքը բաղկացած է 6 մետաղադրամներից՝ «Սոսի», «Ուռենի», «Սոճի», «Կաղնի», «Բարդի», «Հաճարենի»:

Էսքիզների հեղինակ՝ Էդուարդ Կուրղինյան:
Հասվել է Սլովակիայի դրամահատարանում:





Ներին մրցույթ - 2015

2015 թ. ՀՀ կենտրոնական բանկը կազմակերպել է **«Տարվա լավագույն հուշադրամը»** անվանակարգով ներին մրցույթ: Մրցույթին ներկայացվել են ՀՀ կենտրոնական բանկի կողմից 2015 թ. թողարկված հուշադրամները: **«Տարվա լավագույն հուշադրամը»** անվանակարգում նախապատվությունը տրվել է **«Հայոց ցեղասպանության 100-րդ տարելից»** հուշադրամին:



«Հայոց ցեղասպանության 100-րդ տարելից»

հուշադրամի էսքիզների հեղինակներն են Սուրեն Սիմոնյանը և Արամ Ուռույանը:

Սուրեն Սիմոնյանը տեխնիկական գիտությունների թեկնածու է, 1993-2001 թթ-ին՝ «Նամականիշ» ՓԲԸ-ի տնօրեն, գեղարվեստական խորհրդի նախագահ: Եվրոմիության 50-ամյակ փոստային նամականիշի հեղինակն է: 2004 թ-ից զբաղեցնում է ՀՀ կենտրոնական բանկի Դրամաշրջանառության վարչության պետի պաշտոնը և ակտիվորեն մասնակցում ՀՀ դրամանիշերի էսքիզների մշակմանը:

Արամ Ուռույանը ԷՀՄ-ի կոնստրուկտոր-տեխնոլոգ է, համակարգչային գրաֆիկայի մասնագետ: Ձևավորել է ավելի քան 100 albomներ և գրքեր, ինչպես նաև՝ ՀՀ դրամանիշերի վերաբերյալ տպագրական նյութեր:

Բովանդակություն

Ուղերձ		2
Հուշադրամներ 2015		4
Հայաստանի պատմություն	«Հայոց ցեղասպանության 100-րդ տարելից»	6
Հայաստանի մշակույթ	«Լազարյան ճեմարանի հիմնադրման 200-ամյակ»	10
Անվանի անհատներ	«Փանոս Թերլեմեզյանի ծննդյան 150-ամյակ»	12
Հայոց պեսականություն	«Ավդրանիկ Օզանյանի ծննդյան 150-ամյակ»	14
Հայաստանը և միջազգային հաւրությունը	«Եվրասիական տնտեսական միություն»	16
Հայաստանի պատմություն	«ՀՀ սահմանադրական դատարանի 20-ամյակ»	18
	«Անմոռուկ»	20
	«Նահատակված հայ մտավորականներ»	22
	«Կորսի և պայքարի կոթողներ»	24
Հայաստանի Հանրապետության հուշադրամները ըստ շարքերի և թողարկման տարեթվի (1994-2015)		26
2016 թ. Հայաստանի Հանրապետության հուշադրամների թողարկման ծրագիր		30
Դրամահատարաններ		32
Մասնակցություն մրցույթներին	Միջազգային մրցույթ - 2015	34
	Ներքին մրցույթ - 2015	38

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԴՐԱՄՆԵՐ 2015

ՀՀ կենտրոնական բանկի հրատարակություն

Գազմողներ՝ Նունե Տերյան, Սուսաննա Պետրոսյան, Աննա Խաչատրյան, Ռոբերտ Քոչարյան
Խմբագիրներ՝ Մարիետա Թելունց, Հարություն Համբարձումյան
Ձևավորումը՝ Արամ Ուռուտյանի

Տպաքանակը՝ 400



2015

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

Էլեկտրոնային հասցե՝ emission@cba.am
Ինտերնետային կայք՝ www.cba.am